

891.99

7-34

ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ

## ՍԻՐՈՅ ՄԻԶՆՈՐԴՆԵՐԸ

ԵՒ

ԻՆՉՊԵՍ Կ'ԵԽԿՄԻ ՍԻՐԱՀԱՐՈՒԹԻՒՆԸ  
ԵՒ ԻՆՉՊԵՍ ԿԸ ՎԵՐԶԱՆԱՑ




Գ. Ր. Ա. Տ Ո Ւ Ն Վ. Զ Ա Ր Դ Ա Ր Ե Ս Ա Ն

4, Շարք Խպրանիմ փառ, 4

Գ. Ա. Հ Ի Ռ Ե

1937



1565 - 2011



## ՍԻՐՈՅ ՄԻՋՆՈՐԴԱՌԵՐԸ

\* \* \* \* \*

Ամուսնութիւնն ի ակզբանէ անտի վաճառականութեան գլխաւոր ճիւղերէն մին համարուած է:

Աշխարհիս վրայ չկայ երկիր մը, քաղաք մը, գիւղ մը, խրճիթ մ'ուր գոյութիւն չունենայ այս առեւտուրն:

Վաճառականական օրինաց այն տրամադրութեան համեմատ որ քսան տարեկանէ վար եղողներուն կ'արգիլէ վաճառականութեամբ զբաղիլն, անչափահաներն չեն կրնար ամուսնանալ և ի դիմաց նոցին փոխանորդաբար կը կարգուին նոցա խնամակալները:

Անոնք որ մեծ դրամագլխոյ տէր են մեծ քանակութեամբ կը գնեն և կը վաճառեն, իսկ անոնք որ փոքր դրամագլուխ ունին պղտիկ քանակութեամբ գործ կ'ընեն:

Բազումք մեծ հարստութիւններ կը դիզեն այս առեւտուրէն և բազումք կը սնանկանան:

Ապրանքի ընտրութիւնն մեծ կարեւորութիւն ունի առեւտրական այս ճիւղին մէջ:

Աղջիկներ կան որ մէկ անգամ լուացուելով իրենց գոյնը կը նետեն, ինչպէս կան մանչեր որ տկար հիւսուածք ունին և քիչ ժամանակի մէջ կը մաշին և կը պատռուին:

Ապիտակն և կարմիրն միւս գոյներէն աւելի

յարգի համարուած լինելով շատ վաճառականներ իրենց տակրանքներն այդ գոյներով կը ներկեն և յաճախորդներն կը խաբեն:

Յաճախորդներուն մէջ կայ նաև ստուար մաս մ'որ թուի գոյնն նախապատիւ կը համարէ, և վաճառականք ոմանք այդ գոյնն տլ կը նենդեն շատ անդամ:

Ուստի այս և ասոնց նման ուրի, բազում կեղծ ու պատիր խարէութեանց չգոհուելու համար սովորութիւն եղած է, մանաւանդ վերջերս, միջնորդներու առաջնորդութեամբ ամուսնանալ:

Այս ծանօթութիւններն տալէն յետոյ դառնանք Պ. Կուռնելիոսին որ գուրսէն նոր եկած է ամուսնալու համար և պանդոկ մ'իջեւանած է:

Պ. Կուռնելիոս երեսուն երեսունըմէկ տարեկան մարդ մ'է միջակ հասակով: Դէմքն ոչ համակրելի է և ոչ ալ հակակրելի, չեղոք դիրք մ'ունի: Երկար պճղնաւոր մը և երկար արձաթագոյն վերարկու մը կը հագնի և մէջքը գոտի կածէ: Բարեպաշտ և աստուածալախ անձ մը լինի կը թուի, միշտ իւր քովի բարձին վրայ ունի Զեն հոգեւոր մը, որուն վրայ կը գտնուի իւր քթախոտի տուփն: Ամէն առաւօտ նարեկացիէն քանի մը գլուխ կը կարգայ բարձրածայն, առանց մոռնալու իւր ոսկեզօծ Սաղմոսն և Գործ Առաքելոցն զորս մետաքսեայ թաշկինակի մը մէջ կը պահէ մեծ խնամով:

Պ. Կուռնելիոս պարզ մարդ մ'է սրտով և մտքով. և այն կարծիքն ունի թէ ամէն մարդ իրեն պէս ստեղծուած է, ուստի քիչ մը դիւրահաւան է և ամէնուն խօսքին կը հաւատայ առանց խորհրդածելու և դատելու:

Պանդոկ իջնալուն հետեւեալ օրն հմայից դիմեց, բարեկամաց ոմանց խրատներուն անսալով, պակլայ

նետել տալու և հասկնալու համար թէ ամուսնութեամբ երջանիկ պիտի ըլլայ թէ թշուառ: Հաղորդուեցաւ իրեն թէ սև աչերով, սև ընքուիներով, կարմիր երեսով, յունական քիթով — գրաբառ յունարէն — փոքր բերանով, բարձրահասակ կին մը պիտի ունենար և երջանիկ պիտի ըլլար: Այս տեղեկութիւններն ստանալէն յետոյ գոհ սրտիւ դարձաւ իւր սենեկան ուր գտաւ տասնի չափ կիներ, որ, իրեն գալուստն իմանալով, փութացած էին դալ զինքն տեսնել:

Սենեկալը մտնելուն պէս Պ. Կուռնելիոս շուարեցաւ մնաց սեմին վրայ ի տես այս կիներու որք ոտք ելնելով անմիջապէս գէպի իրեն դիմեցին բարի գալուստ մաղթելու համար:

— Բարի եկար, Մեծապատիւ Կուռնելիոս, ըսաւ տիկին Ա. սկսելով անոր աջ ձեռքը թօթուել:

— Ներումն կը ինդքեմ շոգենաւին մէջ զձեղ չդիմաւորելուա համար, յարեց տիկին Բ...Պ. Կուռնելիոսին ձախ ձեռքը թօթուելու սկզբնաւորութիւն ընելով:

— Կը յուսամ թէ տունը ամենքն ալ աղէկ են, ձեր հայրը, ձեր մայրը, ձեր քոյրերն, ձեր եղբայրներն, աղէկ ըլլան, ողջ ըլլան, շարայարեց տիկ. Ա... ձեռք թօթուելը շարունակելով:

— Կարծեմ թէ օդն սքանչելի էր և ծովային հաճելի ճամբորդութիւն մը ըրիք, աւելցուց տիկին Բ... հիւրին ձեռքն անընդհատ թօթուելով:

Պ. Կուռնելիոս մէջ մը տիկին Ա..., ին կը նայէր մէյ մը տիկին Բ...ին և յետոյ միւս կանանց որ շրջապատած էին զինքն սեմին վրայ և ձեռքը կ'ուզէին թօթուելու համար:

— Բաւական է ա'լ տիկին Ա. թող տուէք որ մենք ալ բարի գալուստ մաղթենք, պուաց տիկին Գ...

և տիկին Ա...ին ձեռքէն յափշտակեց Պ. Կուռնելիոսի  
ձեռքն զոր սկսան թօթուել ուժով:

Տիկին Գ...ին օրինակին հետեւեցաւ տիկին Դ...  
և տիկին Բ...էն կորզեց մարդուն ձեռքն զոր ցաւ-  
ցընելու չափ ուժով սկսաւ շարժել:

Պ. Կուռնելիոս իւր ձեռքերն այս կանանց տրա-  
մադրութեանը յանձնած՝ անտարբերութեամբ կոպատէր  
իրաց վախճանին:

Ա... և Բ... տիկինները գնացին բաղմոցին վրայ  
նստան:

Տիկին Գ.— Բարի գալուստ, Պ. Կուռնելիոս, կ'ա-  
զօթեմ որ ուխտ կատարուի ուզածիդ պէս և բախ-  
տաւոր ըլլաս: Երէկ առտու այս բանին համար յատ-  
կապէս եկեղեցի գացի և մոմ վառեցի:

Տիկին Գ.— Բարի մարդոց գործերը միշտ կը  
յաջողին, և դուք շատ բարի, ազնուական, վեհանձն  
մէկն էք, Պ. Կուռնելիոս, արդարեւ առաջին անգամն  
է որ կը տեսնեմ զձեզ, սակայն ես մարդուն դէմքէն  
կը հասկնամ անոր ինչ բնաւորութեան տէր ըլլալ:

«Թոյլ տուէք որ մենք ալ կատարենք մեր պարտ-  
քը, աղաղակեցին տիկնայք Ե... և Զ... և պղտիկ  
կսմթամարտէն ետքը յաջողեցան տիրել Պ. Կուռնե-  
լիոսին ձեռքերուն:»

Տիկին Ե.— Բարի եկար, Պ. Կուռնելիոս, ողջամբ  
եկար Պ. Կուռնելիոս, ինչ որ դրած ես մտքիդ մէջը  
խերով կատարուի Պ. Կուռնելիոս, միշտ խնդաս Պ.  
Կուռնելիոս, միշտ ուրախութեան մէջ տեսնեմ քեղի  
Պ. Կուռնելիոս, քու աղէկութենէդ մենք ալ կ'օգ-  
տուինք Պ. Կուռնելիոս:

Տիկին Զ.— Բարով եկար, Պ. Կուռնելիոս, սիրելի  
եղբայրս. կը մաղթեմ որ աճապարանօք վնասակար  
բան մը չընես. ասանկ գործերու մէջ լաւ խորհիլ և

աղէկ կշռել պէտք է: Սիրելիդ իմ Կուռնելիոս, ես  
ուրիշ խօսք չեմ ըներ:

Տիկին Է... և օրիորդ Ը..., ինչպէս նաև Թ... և Ժ...  
տիկիններն նոյնիմաստ բարեմազթութիւններով իրենց  
պարտականութիւնն վճարեցին Պ. Կուռնելիոսին և  
իրենց պաշտօնակիցներուն քով բազմեցան:

Աւելորդ չէ նշանակել թէ քանի մը կիներ Պ.  
Կուռնելիոսին թեւը մտան և անկիւնն բազմեցուցին  
զայն:

Պ. Կուռնելիոս շուարած՝ քանի մը վայրկեան  
կիները գիտելէն ետքը, քենակի քսակն հանեց և  
միջնորդներուն դառնալով հարցուց.

— Մէյ մէկ նարկիլ կը խմէք:

կիները խնդացին քրքիչով:

— Ինչո՞ւ խնդացիք, հարցուց Պ. Կուռնելիոս  
պաղ արեամբ:

— Որովհետեւ մենք նարկիլ չենք խմեր, պա-  
տասխանեցին կիներն միաբերան:

— Նարկիլ չխմողները կը խնդա՞ն այս քաղա-  
քին մէջ:

— Ոչ... բայց... որովհետեւ... իրաւ որ մեր խըն-  
դալն պարապ բան է, կարծեմ ձեր քաղաքը կնիկները  
նարկիլ կը խմեն:

— Կան որ կը խմեն կար որ չեն խմեր... բայց  
նարկիլ կ խմելը...:

Տիկին Ա.— Նարկիլ իխօսքը մէկդի գնենք Պ.  
Կուռնելիոս... իմ հոս գալուս պատճառն հարկաւ  
գուշակած էք. ես կարգութիւն ուզողներուն աղջիկ կը  
գտնեմ և...:

Տիկին Բ.— (Բնդմիջելով) Ես ալ, Պ. Կուռնելիոս,  
աղջիկ կը գտնեմ և ինչ գեղե...:

Տիկին Գ.— (Բնդմիջելով) Իմ արհեստ ալ այս է,  
ձեռացս տակ տնանկ աղու...:

Տիկին Դ.— (Ընդմիջելով) Դուն ինձի մտիկը ըրէ,  
Պ. Կուռնելիոս... ասարակի պէս...:

Տիկին Ե.— (Ընդմիջելով) ինչու քեզի մտիկ  
ալիտի ընէ եղեր... աղամանդի պէս աղջիկներ կը բե...:

Տիկին Զ.— (Ընդմիջելով) ի՞նչ պարկեշտ և ու-  
սումնական աղջիկներ ունիմ ես... անանկ դաշնակ կը  
զարնեն և անանկ կը պարեն որ կարծես թէ մէյ մէկ  
հրեշտ...:

Տիկին Է.— (Դարձեալ ընդմիջելով) Հապա իմին-  
ներս որ ֆրանսերէն կը խօսին ե...:

Օրիորդ Ը.— (Ընդմիջելով) Երեսուն տարիէ ի  
վեր այս արհեստին մէջն եմ և այն ամէն անոնք  
որոնց աղջիկ գտած եմ, գոհ եղած են ե...:

Տիկին Թ.— (Ընդմիջելով) Ես ինքինքս չեմ գո-  
վեր, թող կուտամ որ դործերս խօսին, իմ գտած  
աղջիկներս տասներկու զաւակ կը բերեն և միշտ  
տասնեւութ տարեկան կը կարծուին. կին ըսածդ ալ  
ասանկ ըլլալու է որ....

Նորէն ընդմիջումներ:

Տիկին Ժ.— Պ. Կուռնելիոս գիտէ թէ մեր մէջ  
ո՞րն վարպետ է այս գործին մէջ, զի՞նքը մտիկ ընենք  
նայինք, ի՞նչ կարծիք պիտի յայտնէ:

Կուռնելիոս.— Բայց նարկիլէ խմելն անվայել  
բան մը չէ կարծեմ որ ասանկ խնդացիք վրաս:

Տիկին Ժ.— Բան մ'էր անցաւ գնաց, անոր վրայ  
խօսիլն աւելորդ է. իսկ եթէ շատ վիրաւորուեցար,  
մեր խնդալը յետս կը կոչենք:

Կուռնելիոս.— Ի՞նչ ըսել է յետս կոչել:

Տիկին Թ.— Այսինքն իբր չեղեալ համարիլ:

Կուռնելիոս.— Իբր չեղեալ համարելով ի՞նչ կը լլայ:

Տիկին Ա.— Որպէս թէ դուն մեզի հարցուցած  
կ'ըլլաս թէ նարկիլէ կը խմէք և մենք ալ խնդացած  
չենք ըլլար:

Կուռնելիոս.— Աս ի՞նչ խայտառակութիւն է. ես  
տղամյ եմ որ խարուիմ թէ չխնդացիք:

Տիկին Բ.— Ատոր վրայ խօսիլը չարժեր Պ. Կուռ-  
նելիոս, հրամանքդ ի՞նչ տեսակ աղջիկ կուզես, անոր  
վրայ խօսինք:

Տիկին Թ.— Ամեն տեսակ աղջիկ ունիմ ձեռքիս  
տակ, Պ. Կուռնելիոս, եթէ կը հաճիք հրամմեցէք, եր-  
թանք մէկիկ մէկիկ ցուցնեմ ձեզի:

Եւ Տիկին Թ... Պ. Կուռնելիոսին թեւէն քաշելով  
բազմոցէն վար կ'իջեցնէ զայն:

Օրիորդ Ը.— Ո՞ւր կը տանիս մարդը, Տիկին Թ...  
գուցէ քեզի վստահութիւն չունի: Օրիորդ Ը... կսկսի  
Պ. Կուռնելիոսին միւս թեւը քաշել:

Տիկին Գ.— Շիտակն ես ասանկ աներեսութիւն  
տեսած չունիմ, խեղճ մարդուն թեւերը պիտի փըր-  
ցունեն:

Միւս միջնորդներն ալ կոկսին պոռակ, կռիւն կը  
մեծնայ, հայհոյութիւնն կսմիթի կը փոխուի, կսմիթն  
կոռուփի, կռուփն կիցի, այս իրարանցումին մէջ Պ.  
Կուռնելիոսն մէյ մը ասդին կը քաշեն մէյ մը անդին:

Ազմուկն կը մեծնայ, վեր կը վազէ պանդոկա-  
պետն, և կը կանգնի միջնորդներուն մէջտեզը որ ըս-  
կած էին կոչիկի հարուածներ իջեցնել իրարու գլուխ:

— Զ՞ք ամչնար, չչ՞ք խպնիր, կը պոռայ պան-  
դոկապետը, ի՞նչ խայտառակութիւն է աս: Դուրս ելէք  
ամէնքդ ալ չպիտի կարգուի այդ մարդը:

Կուռնելիոս.— Զպիտի կարգուիմ ես, դուրս ելէք:  
Պանդոկապետ.— Թող տուէք իւեղձին օձիքը:

Կուռնելիոս.— Թող տուէք իմ օձիքս:

Պանդոկապետ.— Կարգուած է ան, և քանի մը  
զաւակներ ալ ունի:

Կուռնելիոս.— Այս կարգուած եմ ես և քանի մը  
զաւակներ ալ ունիմ: Ողջ ըլլաս, Պ. պանդոկապետ,

որ վրայ հասար և շունչ առնել տուիր ինձ, այս  
կնիկները պիտի խղդէին զիս:

Պանդոկապեան կը յաջողի սենեակէն գուրս  
հանել կնիկներն և բարեկամաբար կը յորդորէ Պ.  
Կուռնելիոսն որ զգուշանայ անոնցմէ և հաւատք  
չընծայէ անոնց խօսքերուն:

Պ. Կուռնելիոս չնորհակալութիւն կը յայտնէ  
պանդոկապետին և կը խոստանայ անոր խրատներով  
գործելու:

Կէս ժամ կ'անցնի:

Տիկին Գ... Պ. Կուռնելիոսին սենեակը կը մտնէ:

— Շատ ցաւ զգացի, կ'ըսէ, քիչ մը առաջ տեղի  
ունեցած անցքին վրայ: Ես վարժուած չեմ ասանկ  
բաներու, ես մարդու զաւակ եմ, քաղաքավարութիւն  
սորված եմ, այդ կնիկներուն բարեւ տալն անդամ իմ  
պատուոյս կը գոչի, ա՞հ, չէք գիտեր, Պ. Կուռնելիոս,  
որքան ստորին արարածներ են անոնք:

— Ինծի ալ շատ ստորին արարածներ երեւցան:

— Խարդախ են:

— Այո:

— Լիրը են ամէնքն ալ:

— Ես պիտի ըսէի:

— Հիմա հրամանքդ ինծի մտիկ ըրէ, բայց վըս-  
տահութիւն ունեցիր վրաս, մի՛ վախնար, չեմ խսքեր  
քեզի: Միայն ըսէ ինձ թէ ի՞նչպէս աղջիկ կ'ուզես:

— Ու աչքերով, սև ընքուիներով, պղտիկ քի-  
թով, բարձր հասակով աղջիկ մը կ'ուզեմ:

— Ճիշդ ուզածիդ պէս հատ մը կայ ճեռքիս տա-  
կը: Վաղը վեց ու կէսին ատենները կուգամ, քեզի  
կ'առնեմ, մէկտեղ կ'երթանք և աղջիկը կը տեսնես:

— Շատ աղէկ, չնորհակալ եմ, աւելի կանուխ չի  
կրնար ըլլալ:

— Զէ, ընդհանրապէս ութնին միջոցները կ'եր-

թան աղջիկտեսի, վեցուկէսին եթէ ելենք ասկից  
ութին աղջկան առնը կը գտնուինք:

— Քանի որ անանկ է, ի՞նչ ընենք, ըսածիդ պէս  
ըլլայ:

— Այս հագուստներովդ պիտի երթաս:

— Եթէ կ'ուզես ու չուխայէ շալվարս և ֆրարքը  
նիւպիկս կը հագնիմ, գլուխս ալ եազմաս կը կտպեմ,  
անանկ կ'երթանք:

— Բանրալօն, սերդի չե՞ռ կրնար հագնիլ:

— Զէ, չէ, չէ...:

— Քիչ մը ֆրանսերէն գիտե՞ս Պ. Կուռնելիոս:

— Ամենեւին չեմ գիտեր:

— Սանկ պօնժաւ մը, աշիկօ մը, մօնէեր մը ըսեւ-  
լու չափ գոնէ...:

— Վաղը չե՞նք կրնար սորվիլ անոնք շուտ մը:

— Ներեցէ՞ք, հրամանքնուդ գործն ի՞նչ է, ի՞նչ  
առուտուրով կ'զբաղիք:

— Տոկոտվ ստակ կուտամ ուզողներուն:

— Շատ լաւ, վաղը կուդամ, կ'երթանք: Ա՛լ ու-  
րիշին խօսքին ականջ մի՛ կտխեր:

— Ո՞վ ականջ կը կտխէ այդ ստորին արարած-  
ներուն, խարդախներուն և լիրերուն:

— Ապրիս: Վաղը անպատճառ կուգամ, մնաք բա-  
րով:

— Երթաք բարով:

Տիկին Գ..., սենեակէն ելած ժամանակն գրան  
քով կը տեսնէ Տիկին Է..ն, որ ապրանքի տախտակէ  
սնատուկի մը վրայ նստած էր և տանց բարեւելու  
գայն կ'անցնի կ'երթայ:

Տիկին Է..ն կը ներկայանայ Պ. Կուռնելիոսին:

— Նորէն բարիլոյս Պ. Կուռնելիոս:

— Դուրս, դուրս, դուրս...:

— Ի՞նչ կայ Պ. Կուռնեն...:

— Դուրս կ'ըծեմ կոր քեղի, դուրս ելիր:  
— Ի՞նչ պատճառաւ...:  
— Պատճառ կը հարցնես դեռ, ստորին արարած:  
— Ե՞ս:  
— Խարդախ:  
— Ե՞ս:  
— Լիրբ:  
— Ե՞ս:  
— Զեղի բարե տախ մարդուս պատռոյն կը դպչի:  
— Հասկցայ, հասկցայ, ի՞նչ ընեմ որ ես ազնուա-  
կան եմ և ուրիշներուն ետեւէն խօսելու սովորած չեմ,  
կարծեմ հիմա ասկից ելնող կինն, անշուշտ զքեղ խա-  
բելու համար, զիս բամբասած է: Բայց թող գիտնայ  
այն կինն որ թող չպիտի տանք իրեն որ զքեղ խարէ  
և թշուառացնէ:  
— Անիկա մարդու զաւակ է:  
— Այնպէս կ'ըսէ ինք, մէջ մ'ալ ուրիշներուն  
հարցուը: Քանի՛ քանի՛ տուներ կործանեց, քանիներու  
գժբախտութեան պատճառ եղաւ, անանկ կնկան մը  
հետ խօսիլն իսկ վասակար է, բայց ինչո՞ւս պէտք:  
— Գէշ կնիկ է:  
— Ինէ գիտցած մի՛ ըլլար, Պ. Կուռնելիոս, բայց  
անկից աւելի գէշ կնիկ գտնել խիստ գժուար է:  
— Իրտ՞ւ կ'ըսես:  
— Ստախօսին մէկն է, բայց ինէ գիտցած մի՛  
ըլլար:  
— Ինձի ալ չատ ճշմարտախօս չերեւցաւ այդ կինը:  
— Քանիներու յիսուն տարեկան աղջիկներ կլի-  
ցուցեր է քսանըհինդ տարեկանի տեղ, բայց, կ'աղա-  
չեմ, ինէ գիտցած մի՛ ըլլար, ես ասանկ ստորին բա-  
ներու կարեւորութիւն տալով անոնց վրայ խօսիլ չեմ  
ուզեր, իմ կրթութիւնս թող չտար որ խօսիմ:  
— Կրթեալ կնիկ մ'ալ ասանկ ըլլալու է:

— Զեմ ուզեր ըսել, բայց շատ սատանայ կնիկ է:  
— Անանկ է անանկ, ես ալ այն կարծիքէն եմ:  
— Տունդ փլցնելու համար եկած է քեղի:  
— Շատ աղէկ ըսիր, ճիշդ այն նպատակաւ եկած  
է: Լաւ համոզուեցայ:  
— Հիմա, Պ. Կուռնելիոս, դուք կարգուիլ կ'ու-  
զէք, այնպէս չէ:  
— Այս, կարգուիլ կ'ուզեմ:  
— Կը գովեմ զքեղ, մարդս կարգուելու է...:  
— Ծնողքս ալ այնպէս ըսին:  
— Բայց հասկնալ կ'ուզեմ նախ թէ ինչու համար  
պիտի կարգուիս...:  
— Ինչո՞ւ համար... ի՞նչ գիտնամ..., ամէն մարդ  
ինչո՞ւ համար կը կարգուի... կարգուելու համար:  
— Ի՞նչ նպատակաւ կը կարգուիս:  
— Կնիկ մ'ունենալու համար:  
— Լաւ: Հասկցայ միտքք, ի՞նչ տեսակ աղջիկ  
կ'ուզէք ուրեմն:  
— Սեւ աչքերով, սեւ ընքուիներով, պղտիկ  
բերնով և քիթով և բարձր հասակով աղջիկի մը  
պէտք ունիմ:  
— Գլխուս վրայ:  
— Այս, ասանկ աղջիկ մը:  
— Զեր ուղածին պէս աղջիկ մը կայ. եթէ կը  
հաճիք՝ վաղը երթանք տեսնելու զայն:  
— Երթանք:  
— Ընդհանրապէս եօթնուկէսին կամ ութին մի-  
ջոցները աղջիկ կը հանեն ի տես, վաղը վեց ու կէսին  
հոս կը գտնուիմ և մէկտեղ կ'երթանք:  
— Շատ աղէկ:  
— Խօսքիդ վրայ հաստատ ես, այնպէս չէ:  
— Այս, շատ հաստատ եմ:  
— (Զեսքը քօքուելով) Մնաք բարով ուրեմն:

— Երթաք բարով... ձեռքերնիդ որչա՞փ փափ ուլքէ, տիկին:

— Խնդալու խօսքեր կ'ընես Պ. Կուռնելիսս ձեռքիս փափկութիւնն է մնացեր, հարսնութեանս տեսնէիր դուն իմ ձեռքերս... ո՛հ, տարիները, տարիները... վաղը վեց ու կէսին:

— Այո՛:

Տիկին Ե... կը մեկնի:

Պ. Կուռնելիսս առանձին ֆնալով՝ նարկիլին կը լեցնէ և կոկսի քաշել:

Քառորդ մը կ'անցնի և ահա սենեակին դուռը կը բացուի և կը մանէ օրիորդ Ը... որուն երեսէն յիսուն յուլիսներ, հրատապ ամիսներ, անցած են:

— Ի՞նչ կ'ուզէք, տիկին, կը հարցնէ Պ. Կուռնելիսս, քիչ մը խստութեամբ:

— Կը նախստէ՞ք զիս Պ. Կուռնելիսս:

— Նախստելու բան չկայ հոս. ինչո՞ւ եկաք:

— Այդ բառն չվայլեցուցի ես ձեզի. սիրտս վիրաւորելու համար անկէ աւելի սայրասուր բառ մը չէիք կրնար գործածել:

— Ի՞նչ կը ծախես:

— Տիկին ըսիք ինձի, մինչդեռ գիտնալ հարկ Երթէ ես օրիորդ եմ, այսինքն դեռ կարգուած չեմ:

— Ա՞ս է եղեր ծանր բառը. մեղայ, ես քեզ մեղայ, մէյ մ'ալ չեմ ըսիք օրիո՞րդ: Ի՞նչ կ'ուզէք օրիորդ, ի՞նչ գործ ունիք հոս օրիորդ:

— Հասկնալ կ'ուզէի թէ քանի տարեկան աղջիկ կ'ուզէք:

— Ես չպիտի կարգուիմ օրիորդ:

— Պիտի կարգուիք և այն ալ խարեբայ միջնորդներու առաջնորդութեամբ, և կարգուելէն շաբաթ մը յետոյ պիտի լաք ձեր անխոհմութեան վրայ և

պիտի լաէք, «Ի՞նչո՞ւ օրիորդ Ը... ին խօսքը մտիկ չըրի...»

— Որո՞նք են խարեբայ միջնորդները:

— Այս առառուան կիներուն բոլորն ալ խարեբայ են, անոնք երկու կողմէն ստակ առնելու համար միայն կը հոգնին. իրենց հոգը չէ եթէ հարստանիքն շաբաթ մը վերջը այրը կինէն կը զատուի, անոնք թէ այրն կերեն և թէ աղջիկը, անոնք մէջմէկ հրէշներ են... անոնք...:

— Ի՞նչ կը լսեմ Տէր Աստուած:

— Անոնք անուշ խօսքերով կը թունաւորեն մանչերը և աղջիկներն աղջիկներուն կը գովեն և մանչերն աղջիկներուն. սուտ կը խօսին, երեւակայական հարստութիւններ կը խստանան երկու կողմի, դրամ կ'առնեն և թշուառութիւն կը վաճառեն:

— Ես ալ անանկ բան մը նշմարեցի այդ կանաց վրայ:

— Սւելի լաւ է որ մարդ մ'ոտքը քար մը կապէ և ինքինքն ծովը նետէ քսն թէ անոնց վստահի:

— Այնպէս է. շատ վնասակար էակներ են անոնք, քանի մը ոսկեոյ համար ուրիշներուն անդորրութիւնը կը վրդովեն:

— Ուրեմն զգոյշ կեցիր:

— Ա՞զ կարեւորութիւն կուտայ անոնց խօսքին: Շիտակն խօսելով դուք շատ պարկեցաւ և պատուաւոր աղջիկ մ'էք:

— Չեմ գիտեր, բայց ստորանութիւն չեմ ընդունիր: Ո՛հ, Պ. Կուռնելիսս, չեմ կրնար արտասուքս զսպել երբ կը խորհիմ թէ ինչ վիճակի պիտի ենթարկուէիր եթէ անոնց միջնորդութեամբ աղջիկ մը անէիր. ո՛հ, այս աղջիկն իբրև գերի, իբրև ստրուկ պիտի գործածէր զքեզ... առառու իրիկուն գլուխդ

պիտի ցաւցնէր... պիտի բարկացնէր զքեզ և մահդ պիտի փութացնէր: Ասանկ կնիկէ մը զքեզ ազատելու համար է որ եկայ քեզի հետ առանձին տեսութիւն մը ընելու:

— Ծնորհակալ եմ. մեծապէս չնորհակալ եմ:

— Պ. Կուռնելիոս, պարկեշտ և համեստ աղջիկներ շատ կան, միայն թէ գտնելը դժուար է . . . ահ (ծունդի վրայ) ներէ ինձ որ անկեղծութեամբ խօսիմ հետդ, ահ. կը սիր...:

— Հէ...:

— Կը սիրեմ զքեզ:

— Կը սիրես մի՞ զիս, ինչո՞ւ համար:

— Զգիտեմ, մաքնիսական ի՞նչ զօրութիւն ունիս վրադ որ սիրսա քեզի ձգեցիր մէկ անդամ միայն տեսնուելով հետս:

— Աս ի՞նչ կ'ըսէ:

— Ո՞հ, սիրելիդ իմ Կուռնելիոս, մի մերժեր այն սէրն որ իւր ոտքով կուգայ և կը ներկայանայ ձեզ, սէր մը որ սրտէ մը կը մեկնի, սէր մը որ երջանկութիւն կը բուրէ, սէր մը որ առանց միջնորդի կը յայտնէ ինքզինքն:

— Ի՞նչ խօսքեր են ասոնք, չեմ հասկնար:

— Ըսէ ինձ, Պ. Կուռնելիոս, թէ կը սիրես զիս: Դուրս ելիր:

— Սըկէ հունա չեմ երթար, եթէ չսիրես զիս: մահուանս պատճառ պիտի ըլլաս, ձեռքովդ գերեզման պիտի իջեցնես զիս:

— Տէր ողորմեա, Տէր ողորմեա....

— Մարդասպան պիտի ըլլաս....

— Տէր Աստուած: ի՞նչ փորձանք...:

— Ես բաւականասէր աղջիկ մ'եմ, շատ հագուստ չեմ ուզեր, քիչ ծախքով հարսնիքը կը կատարենք, կ'ելնենք կ'երթանք, սիրուն զաւակներ կ'ունենանք:

— Գընա սըկէց կ'ըսեմ քեզի, անպիտան:

— Վանաէ, չպիտի երթամ, ծեծէ զիս չպիտի պոռամ, զարկ սրտիս, ձայն չպիտի հանեմ, քեզի նուիրուած եմ ես...

— Ես նուէր չեմ ուզեր... կորի սըկէ...:

— Կորի սըկէ... կորի սըկէ... կորի սըկէ... անգութ... ահ... մարելիք կուգայ վրաս... քիչ մը ջուր...:

— Աս ինչ անտանելի փորձանքի հանդիպեցանք... դիմանալու բան չէ աս... ոտքէն քաշելու դուրս նետելու է լիրը, աղջիկ գտնելու համար եկեր՝ ինք զինքն կլեցնելու կ'աշխատի կոր. ի՞նչ աներես աղջիկ... մարեցաւ ի՞նչ եղաւ:

— Գաւաթ մը ջուր կ'առնէ և քիչ մը, ջուր կը սրսկէ երեսը:

— Որ. Բ... աչքերը կը բանայ:

— Ծնորհակալ եմ, կ'ըսէ, ինծի համար տարած ինամքդ գրաւական մ'է առ իս ունեցած սիրոյդ... ուրախ եմ որ սէրս չը մերժեցիր: Ոհ, Պ. Կուռնելիոս, կազաչեմ, վերցուր զիս և բազմոցին վրայ պառկեցուր, վրաս ալ աղէկ մը ծածկէ, որովհետև դող մը կ'զգամ:

— (Մեկուսի) Հիմա գործերնիս կարգի մտաւ... խելքէս մտքէս չէր անցնէր ասանկ փորձանք մը... գետնին տակն անցնի, բարով խելով սենեակս չմտնէր:

— Պ. Կուռնելիոս օր. Բ...ին թեւը կը մտնէ և կը տանի բազմոցին վրայ կը պառկեցնէ զինքն:

— Մեծապէս չնորհակալ պիտի ըլլայի, կ'ըսէ օրիորդն պառկած տեղը, եթէ բժիշկ մը զրկէիր ինծի Պ. Կուռնելիոս:

Կուռնելիոս.— Երթամ բժիշկ կանչեմ...:

Օրիորդ Բ.— Ոհ, սիրելիդ իմ Կուռնելիոս (այս



պահուն պանդոկապետն սենետի կը մտնէ) չես գիտեմ  
թէ սէրն որքան ախտերու աղբիւր է. քանի քանի  
աղջկներ մեռած են իրենց սէրը մերժուած ըլլոլուն  
պատճառաւ: Սիրելիդ իմ կուռնելիս կեանքս ձե-  
ռացդ մէջ է... կը սիրեմ զքեզ...:

Պանդոկապետ.— Բարեւ ձեզ...:

Կուռնելիս.— Հրամմեցէք, Պ. պանդոկապետ,  
նստեցէք:

Պանդոկապետ.— Ո՞չ, նստելու համար չեկայ:  
Գիտէք Պ. կուռնելիս որ այս պանդոկին մէջ գըտ-  
նուող անձերուն ամէնն ալ վաճառական են:

Կուռնելիս.— Այո՛:

Պանդոկապետ.— Մանաւանդ պատուաւոր վաճա-  
ռականներ:

Կուռնելիս.— Այնպէս է:

Պանդոկապետ.— Ուստի թող չեմ կրնար աւալ որ  
ձեր գայթակղելի ընթացքն շարունակէք և իմ տունս  
փլցնէք, հիմայ, անպատճառ հիմա դուբս ենելու էք  
այս պանդոկէն... ես զքեզ պարկեշտ և պատուաւոր  
գաւառացի մը կարծեցի...:

Կուռնելիս.— Ի՞նչ ըրի որ...:

Պանդոկապետ.— Ամիսն հարիւր ոսկի ալ տաս  
չեմ ընդունիր անանկ բան:

Կուռնելիս.— Բայց...:

Պանդոկապետ.— Ես քու կարծած պանդոկապետ-  
ներէն չեմ, քառասուն տարի է որ այս գործով  
կ'զբաղիմ:

Կուռնելիս.— Զեմ հասկնար ինչ ըսել կուզես:

Պանդոկապետ.— Բաւական պինդ երես ունենալու  
ես որ չհասկնաս. ո՞վ է հոն պառկողը...:

Կուռնելիս.— Կին մ'է որ ինծի աղջիկ գտնելու  
համար եկաւ և հիւանդանալով պառկեցաւ...:

Պանդոկապետ.— Պարապ տեղը մի՛ ջանար զիս

համոզելու. ես գիտեմ գործին ինչ ըլլալը. դու կը  
կարծես թերեւս թէ պանդոկապետն չգիտեր զքեզ և  
անտարբեր կը նստի երբ կին մը երկու երեք ժամ  
սենեակիդ մէջ կը գտնուի: Շուտ ըրէ՛, ոնտուկդ և  
անկողինդ ա՛ռ և գնա ասկից, ապա թէ ոչ ոստիկա-  
նութեան ձեռքով դուրս կը նետեմ զքեզ:

Կուռնելիս.— Այս խօսքերէ՛ բան մը չեմ հաս-  
կընար:

Պանդոկապետ.— Պ. կուռնելիս, այս պանդոկը  
սիրոյ պանդոկ չէ, գնա՛ ուրիշ տեղ սիրէ՛:

Կուռնելիս.— Ո՞վ կը սիրէ...:

Պանդոկապետ.— Երկար կ'ընէք, ձեզի հետ շատա-  
խօսութիւն ընելու ժամանակ չունիմ:

Կուռնելիս.— Այդ կինն դուրս ըրէ որ ինք-  
զինքն կ'ուզէ ինձ սիրցունել:

Պանդոկապետ.— Ի՞նչ կ'ըսէ այս, տիկին...:

Օրիորդ Ռ.— (Որ մինչև այն ատեն գլուխն վեր-  
մակին տակ քաշած քնանալ կը ձեւացնէր) Ես տիկին  
չեմ, գաւառացի ալ չեմ. ուստի դիմացինակ լու ձանչ-  
ցիր և այնպէս խօսէ՛:

Պանդումապետ.— Շատ լաւ, ի՞նչ գործ ունիս հոս:

Օրիորդ Ռ.— Այդ քու գիտնալիք բանդ չէ:

Պանդոկապետ.— Իմ գիտնալու բանն է:

Կուռնելիս.— Այո՛, իր գիտնալու բանն է:

Օրիորդ Ռ.— Զեմ սիրեր զիս Պ. կուռնելիս:

Կուռնելիս.— Զեմ սիրեր:

Օրիորդ Ռ.— Շատ լաւ, ես կ'երթամ, կառք մը  
բերել տուէք որ երթամ, որովհետեւ կարողութիւն  
չունիմ:

Կուռնելիս.— Ինչո՞ւս պէտք:

Օրիորդ Ռ.— Ինչո՞ւգ պէտք, կ'երեւի որ հրա-  
մանքդ Պոլոսյ սովորութիւններուն տեղեակ չես. ոչ  
միայն կառքի վարձքն պիտի վճարես այլ նաև պար-

տաւոր ես բժշկի և դեղի ծախքերն ալ հոգալ մինչեւ  
որ ոտք ելնեմ, այս սենեակին մէջ հիւանդացայ ես,  
եթէ հոս չգայի՝ չպիտի հիւանդանայի, ապա ուրեմն  
դու ես պատասխանատուն:

Տիկին Ա.— (Մանելով) Բարեւ ձեզ... աղուո...:

Պանդոկապես.— Պ. Կուռնելիոս բնաւ պարտաւ-  
կանութիւն չունի քեղի ստակ տալու:

Օրիորդ Ռ.— Ես տասն ոսկի չառած սենեակէն  
դուրս չեմ ելներ. ասկէ ծագելիք հետեւանքներն ալ  
կրնաք գուշակել Պ. Կուռնելիոս...:

Տիկին Ա.— Աղուորիկ աղջիկ մը կայ քեղի յար-  
մար Պ. Կուռնելիոս:

Պանդոկապես.— (Յած ձայնով առ Կուռնելիոս)  
Ասոր քանի մը ոսկի տանք ու ճամբենք, որովհետև  
կրնայ ձեր գլուխը փորձանքներ բերել:

Տիկին Բ.— (Մանելով) Բարեւ Պ. Կուռնելիոս, հա-  
րուստ աղջիկ մը...:

Կուռնելիոս.— Ո՞ր մէկուն պատասխանելու է:

Պանդոկապետն հինգ ոսկի կ'առնէ Պ. Կուռնելիու-  
սէն և Օր. Ը.ին տալով սենեակէն դուրս կը հանէ  
զայն որ բարձրաձայն կը պօռայ.

«Կուռնելիոս, կուռնելիոս, ինծի ըրած չարու-  
թեան կրկինը գտնաս Աստուծմէ, աշխարհի վրայ  
չխնդաս, ինչ որ բռնիս՝ հող դառնայ, առնելիք կը-  
նիկդ տունովդ տեղովդ փճացնէ զքեզ, ողորմութեան  
կարօտ մնաս...»

Պանդոկապետն մեծ նեղութեամբ կը յաջողի  
պտնդոկէն հանել այս միջնորդ օրիորդը:

Տիկին Ա.— Հոգ մի՛ ըներ, Պ. Կուռնելիոս, ամե-  
նուն ծանօթ անառակ մ'է այս... ձիշտ քեղի համար  
աղուորիկ կլորիկ աղջիկ մը գտայ...:

Տիկին Բ.— Սիրադ դող մի հաներ Պ. Կուռնելիոս,  
այդ աղջիկն ամենուն հետ այդ եղանակով կը վար-

ուի... հարուստ օրիորդ մը միտքս ինկաւ քեղի  
համար:

Տիկին Ա.— Խօսքս մի կարեր տիկին Բ... առաջ  
ես խօսիմ, ետքն ալ դուն խօսէ՛, անանկ չէ՞ Պ. Կուռ-  
նելիոս ըսած կանոնաւոր չէ՞:

Կուռնելիոս.— Շատ կանոնաւոր խօսք է:

Տիկին Բ.— Ես ալ կ'ըսեմ որ գործ ունիմ պիտի  
երթամ, անոր համար առաջ ես խօսիմ. այս խօսքին  
մէջ անկանոնութիւն մը կա՞յ:

Կուռնելիոս.— Աս ալ կանոնաւոր է:

Տիկին Ա.— Ես կը փափաքիմ որ իմ ցոյց տալիք  
աղջիկս տեսնէ առաջ, և կարծեմ թէ այս փափաքս  
օրինաւոր է:

Կուռնելիոս.— Խիստ օրինաւոր է:

Տիկին Բ.— Կ'ուզեմ որ առաջ իմին ներկայաց-  
նելիք օրիորդս տեսնէք:

Կուռնելիոս.— Զեր փափաքին մէջ ալ օրինաւո-  
րութեան հակառակ բան չեմ տեսներ:

Տիկին Բ.— Ուշեմն ես կ'երթամ: Պատրաստուե-  
ցէք վազը աղջիկ-տես երթալու ժամն ութին տ-  
եսները:

Կուռնելիոս.— Շատ լու:

Տիկին Բ.— Մնաք բարով:

Կուռնելիոս.— Երթաք բարով:

Տիկին Ա.— Կը զարմանամ որ անանկ միջնորդ-  
ներոց կարեւորութիւն և խօսք կուտաք: Վազը հոս  
կուգամ, անգամ մը կը տեսնէք իմ առաջարկած  
աղջիկս:

Կուռնելիոս.— Ես ալ ան պիտի ըսէի, վազը  
եկուր և անգամ մը տեսնեմ ձեր առաջարկած աղջիկը:

Տիկին Ա. կը մեկնի:

Հետզհետէ կուգան և հետեւեալ օրն ժամն ութ-  
ին ատեններն աղջիկ-տես երթալու խօսք առնելով

Պ. Կուռնելիսէն կ'երթան միւս միջնորդներն որպանդոկին մէջ մէկ ծակ պահուըտած էին:

Պ. Կուռնելիս խւր հիւրերն ճամբելէ յետոյ բազմոցին վրայ անկիւնը կը նստի և կը խորհի թէ ինչ պատրաստութիւններ տեսնել հարկ է հետեւեալ աւուր աղջիկ-տեսի համար: Կէս ժամու չափ մտածելէ յետոյ յանկարծ հայելիի առջեւ կ'երթայ կը կանգնի: Կը քննէ խւր հագուստն և անոր ձեւն, և կ'որոշէ որ եւրոպական ձեւով ձեռք մը լաթ գնէ, արդէն բարեկամներէն ոմանք այս խորհուրդն տուած էին իրեն: Ուշի ուշով կը զննէ մաղերն ու պեիներն և զանոնք կտրելու և եւրոպական ձեւի բերելու հարկը կ'զգայ: Պանդոկապետը կը կանչէ և կաղաչէ անոր որ ընկերանայ իրեն, ձեռք մը լաթ գնելու համար: Պանդոկապետը կը հաւանի, մանաւանդ կը յորդորէ զինքն որ ագամանդեայ մատանի մը և ոսկի ժամացոյցով շլթայ մ'ալ գնէ, յայտնելով թէ վեսացուներուն մատներուն և բաճկոնին մեծ կարեւորութիւն կը տրուի: Փեսացուն հաւանութիւն կուտայ և պանդոկապետին հետ կ'երթայ կը գնէ հանդերձելէնն և գոհարեղէնն որոյ համար կը վճարէ իրը եօթանասուն և ութն ոսկի: Քանի մը օրուան մէջ ֆրանսերէն ուանիլ ալ պէտք է: Օլէնտօրֆը վեց ամիսէն կը սորվեցնէ. դասատու մը բոլորովին նոր և դիւրուսոյց եղանակաւ երկու ամսուան մէջ կուսուցանէ: Ասոնց և ոչ մէկէն Պ. Կուռնելիս կրնայ օգտուիլ: Նա կ'ուզէ որ դոնէ շաբթուան մը մէջ անսխալ գրէ և խօսի: Այս փափաքն յագեցնելու յուսով գրավաճառի մը խանութը կ'երթայ:

— Քիչ ժամանակի մէջ ֆրանսերէն գրել և խօսիլ սորվեցնող գիրք մ'ունի՞ք:

— Այս, ունինք գիրք մը որ վաթսուն դասի բաժնուած է, և եթէ ամէն օր դաս մը պատրաստէք,

Երկու ումսուան մէջ անսխալ կը գրէք, կը խօսիք, և մեծ հեղինակներն դիւրութեամբ կը հասկնաք:

— Եթէ օրը տասը դաս առնեմ վեց օրուան մէջ չեմ կրնար սորվիլ:

— Ինչո՞ւ չկարենաք սորվիլ, աշխատութեան վրայ է գործը. եթէ քիչ մ'աւելի աշխատիք և օրը քսան դաս պատրաստէք՝ երեք օրուան մէջ ալ կրնաք սորվիլ, լիզուներու ուսումն շատ գիւրացած է հիմա:

— Օրը երեսուն դաս առնելով երկու օրուան մէջ կրնա՞մ սա գործին տակէն ելնել:

— Այս, ինչո՞ւ չէ, մանաւանդ թէ օրերն երկար են հիմա:

— Այդ գիրքէն հատ մը տուր ինծի:

— Գլխուս վրայ:

— Գինն ի՞նչ է:

— Կէս արծաթ, տասն դահեկան:

— Շատ աղէկ:

Պ. Կուռնելիս դիւրուսոյց քերականութիւնն կ'առնէ և սենեկալ կ'երթայ:

Նոյն գիշերը քսնի մը ժամ կը կարգայ, և քնոյն մէջ մինչեւ աստօտ ինքնիրեն կը հարցնէ և կը պատասխանէ.

« — Դրացւոյս բամպակէ ատրճանակն ունի՞ս:

— Այս, պարոն ունիմ զայն:

— Հօրս թղթեայ վառարանն ունի՞ս:

— Ո՛չ պարոն, չունիմ զայն:

— Ո՞վ ունի իմ գերճանէ նաւս:

— Եղբայրս ունի:

— Պանիրէ ձիս ու՞ր է:

— Մածունէ կառք մ'ունի՞ս:

— Այս, պարոն ունիմ:

Հետեւեալ առտուն արթննալուն պէս նարեկացիէն գլուխ մը կը կարգայ և անմիջապէս կը ձեռա-

Նարկէ նոր գնած զգեստներն հագնելու գործին։  
Պանդոկապետին աջակցութեամբ կը յաջողի զգես-  
տառորուիլ, միայն փողպատն կապելու համար երի-  
տասարդ մը կը կանչուի որ աղքասիրաբար յանձն  
կ'առնէ այս զոհողութիւնն։

Պ. Կուռնելիոս հագուած շքուած կը պտըտէր սեն-  
եակին մէջ երբ դուռը բացուելով եօթանասնոց գա-  
ւառացի մը մտաւ։

— Բարի ես եկեր, բարի ես եկեր, Պ. Կուռնե-  
լիոս, ըստ քմծիծաղով։

— Բարի առաքեցար Համբարձում աղբար, պա-  
տասխանեց Պ. Կուռնելիոս։

— Ատ ի՞նչ կերպարանք է, բարեկամ։

— Ասանկ պէտք եղաւ։

— Թող տուր, Աստուածդդ սիրես։

— Ինչո՞ւ։

— Ինչո՞ւ... ատ ի՞նչ անձոռնի հագուստ է։

— Եւրոպական է։

— Եւրոպական է... շիտակը ես ձեզի չվայլե-  
ցուցի...։

— Զեմ վայլեր կոր այս հագուստի։

— Հագուստը չվայլեր կոր ձեզի. սա բանքօմի-  
մաներու մէջ մէկը չելնե՞ր, երեսը ալիւրով ծեփած,  
ճիշդ ան կը նմանիք։

— Ամէն մարդ կը հագնի հապա։

— Ամէն մարդու ի՞նչ կը նայիս, դուն ինքինքո  
նայէ, հանէ, Աստուածդդ սիրես, հանէ՛ սա անձոռնի  
լոթերը։

— Խոստովանանք մնայ, աղջիկ տես պիտի եր-  
թանք այսօր։

— Գնա՛, միւս հագուստդ ի՞նչ ունի, ատով շէնք  
շնորհք, կտրին, գեղեցիկ և մանաւանդ պարկեշտ

մարդ կ'երեւաս, այս հագուստով անձանաչ բան մ'ես  
սեպէ թէ։

— Հանեմ կ'ըսես։

— Հարցնելով աւելորդ է։

— Իրաւ անանկ է, հանեմ սա անպիտան հա-  
գուստը։

Բանքալոնն հանելով շալվարը կը հագնի։

— Ի՞նչպէս է։

— Սա բալքօն ալ նետէ՛ և նիւպպէդ հագի՛ր։

Այս միջոցին նոր հիւր մ'ալ կուգայ։

— Հրամմեցէք, կ'ըսէ Պ. Կուռնելիոս, նստեցէ՛ք  
նայինք։

— Հրամմեցէք, սա ի՞նչ է, կէսը արեւելեան և  
կէսը եւրոպական ճաշակով հագուած էք։

— Զեր կարծիքն ի՞նչ է։

— Իմ կարծիքս եւրոպականին նպաստաւոր է։

— Ես հակառակ եմ, կը պատասխանէ Համբար-  
ձում աղբարը։

— Պիտի ածիլուիք Պ. Կուռնելիոս, կը հարցնէ  
սափրին որ ածելիներ և կոնք ի ճեռին դրան սեմին  
վրայ կ'երեւայ։

— Այս, կը պատասխանէ Պ. Կուռնելիոս և կը  
նստի աթոռի մը վրայ։

— Սափրին մեծ խնամքով կ'ածիլէ Պ. Կուռ-  
նելիոսն և անոր պեխելն ու մազերն նոր ճաշակի  
համաձայն կը ձեւէ ու կը կտրէ։

Պ. Կուռնելիոս այս զործն ալ կատարելէն ան-  
միջապէս յետոյ կ'սկսի ընդունիլ միջնորդներն որ  
ծովու ալեաց պէս զիրար մղելով կուգան։

Տիկին Թ.—Պ. Կուռնելիոս, երէկուան պէս իրար  
չանցնինք. ինծի խօսք տուիք որ այսօր երթանք  
աղջիկ-տեսի։ Հրամմեցէ՛ք, երթանք։

Միւս միջնորդներն ամէնը մէկէն.

— Ինծի ալ խօսք տուաւ:

— Կուռնելիոս.— Զկրնա՞ր ըլլալ որ աղջիկներն  
հոս բերէ՛ք:

Տիկին Գ.— Կուտա՞կ կ'ընէք, Պ. Կուռնելիոս:

Տիկին Է.— Այո, Պ. Կուռնելիոս զարմանալի մարդ  
մ'է, ամէնուն խօսք կուտայ:

Տիկին Գ.— Ի՞նչ ընէ խեղճ մարդը, ամէնքդ  
մէկէն վրան յարձակեցաք:

Տիկին Ը.— Ի՞նչու պիտի յարձակէինք, տէր ո-  
զորմեայ:

Տիկին Թ.— Հրամմեցէ՛ք, Պ. Կուռնելիոս:

Միւս մէջնորդները.

— Թող չենք տար Պ., Կուռնելիոս: Մեզի հետ  
խաղա՞լ կ'ուզես: Տիկին Թ... կը քաշէ Պ., Կուռնելիոսն  
մէկ կողմէն որուն թեւէն, ոտքերէն, շալվարէն կը  
քաշեն միւս կիւերը:

Կուռնելիոս.— Աս ի՞նչ խայտառակութիւն է. աս  
ի՞նչ անտանելի բան է եղեր հոս աղջիկ տեսնելու  
երթալը:

Միջնորդներու խումբը.— Մենք քու խաղալիքդ  
չենք:

Կուռնելիոս.— Ամէնուդ հետ ի՞նչպէս կընամ  
դալ միեւնոյն ժամանակ ինը կտո՞ր ըլլամ:

Միջնորդներու խումբը.— Կտոր կտոր ըլլաս. ինչու  
համար մեզի և աղջիկներուն տէրերուն ծախք ընել  
տուիր պարագ տեղը:

Համբարձում աղբար.— Ի՞նչ ծախք...:

Տիկին Թ.— Աղջիկ տես ելնելն առանց ծախքի  
կ'ըլլայ: Հարկաւ պատրաստութիւններ եղան ան  
տուները, և պատրաստութիւնները ձրի չեն:

Կուռնելիոս.— Ի՞նչ պիտի ընենք:

Տիկին Թ.— Ի՞նչ պիտի ընես, մեր ծախքերը  
պիտի տաս: Իմ և ցոյց տալիք աղջկանս ծախքը չորս

ոսկի է, կուտաս չորս ոսկին, բարի եկար հազար  
բարի:

— Հինգ ոսկի ալ ես կ'ուզեմ:

— Վեց ալ ես:

— Նոյնքան ալ իմ ծախքս է:

— Զորսուկէս ալ իմս է:

— Իմս ալ հինգէն քիչ մը պակաս է:

— Ես ալ երեքուկէս կ'ուզեմ:

— Զորս մէկ քառորդ ոսկի ալ ես ծախք ունիմ:

Կուռնելիոս.— Ի՞նչ կ'ըսեն ասոնք, Համբարձում

աղբար:

Ամէնքը,

— Մենք մեր կողմէն Տիկին Թ... ն փոխանորդ կը  
կարգենք, անոր հետը խօսէ՛:

Տիկին Թ.— Այո, Պ. Կուռնելիոս, ասոնց ծախքը  
առլու է, ուրիշ ճար չկայ, բզիկ բզիկ կ'ընեն զքեզ:

Կուռնելիոս.— Ես ի՞նչ յանցանք ունիմ որ...

Տիկին Թ.— Յանցանքդ սա է որ ամէնուն ալ  
զատ զատ խօսք տուեր ես, անոնք ալ դաշեր պատ-  
րաստութիւններ տեսեր են. պատրաստութիւնն ալ  
առանց ծախքի չըլլար:

Տիկին Ա.— Ասկէ վերջ երթալ ուզես իսկ քեզի  
աղջիկ չեմ ցուցներ, անանկ բալրօյով շալվար հագ-  
նող մարդուն համար աղջիկ չունիմ ես:

Տիկին Բ.— Ես ալ չունիմ:

Տիկին Գ.— Կարծէք թէ ես ունիմ:

Տիկին Թ.— Պ. Կուռնելիոս, գոհ ընելու ես այս  
տիկիններն, եթէ ոչ չես կրնար հոս աղջիկ գտնել,  
ասոնք կ'երթան կ'աւրեն քու անունդ:

Տիկին Ա.— Փողոցներու մէջ ծանուցում պիտի  
վակցնենք թէ Պ. Կուռնելիոս խենդին մէկն է:

Կուռնելիոս.— Եթէ ձեր ծախքը վճարեմ...:

Տիկին Ա.— Այն ատեն ինչո՞ւ խենդ ըլլաս, մենք  
մարդ բամբասող չենք, մենք մարդու անունն աւրող-  
ներէն չենք, մենք մարդու զաւակներ ենք։ Մենք  
անարատ կաթ ծծած ենք։

Համբարձում աղբար.— Չեր ծծած կաթին մէջ  
շատ ջուր խառնուած է կարծեմ։

Տիկին Թ.— Պ. Կուռնելիոս, ժամանակ չանցու-  
նենք պարապ տեղ, որոշումդ տուր։

Պ. Կուռնելիոս կը կանչէ պանդոկապետն որ  
նախ կը փորձէ անուշութեամբ ճամբել միջնորդներն  
և չյաջողելով բոնութիւնն ձեռք կ'առնէ. վերջնոյն  
մէջ ալ անյաջող կ'ելնէ և կը համոզէ Պ. Կուռնելիոսն  
որ գրամով գոհացնէ կիները։

Պ. Կուռնելիոս նորէն քասկին բերանը կը բանայ:  
Միջնորդները գոհ կ'ըլլան և կը մեկնին չնոր-  
հակալութիւն յայտնելով։

« — Պ. Կուռնելիոսն ազնիւ մարդ է:  
— Զգացման տէր է:  
— Ազնիւ սիրո ունի:  
— Վեհանձն է:  
— Մեծանձն է:  
— Իրեն կին ըլլալիք աղջիկը շատ աղէկ օրեր  
պիտի տեսնէ»։

Պանդոկապետ.— Կը ցաւիմ Պ. Կուռնելիոս որ ձեր  
դիւրահաւանութեան պատճառաւ պարապ տեղ կը  
վատնէք ձեր ստակներն։ Կանիսաւ իմացուցի ձեզ թէ  
ականջ կախելու չէ այս կանանց որ դիւրահաւան  
չեղողներէն իսկ ստակ կորզելու գիտութիւնն շատ  
լու ուսած են։

Կուռնելիոս,— Իրաւունք ունիս, ես պիտի ըսէի.  
այսչափ ստակ տուինք և գեռ աղջիկ մը չտեսանք։

Պանդոկապետ.— Անպատճառ կարգուիլ կ'ուզե՞ս։  
Կուռնելիոս.— Այո».

Համբարձում.— Անպատճառ ի՞նչ ըսէլ է, թերեւս  
չը կարգուիր։

Կուռնելիոս .— Իրաւունք ունի Համբարձում  
աղբարն, թերեւս չեմ կարգուիր։

Պանդոկապետ.— Նախ և առաջ որոշէ՛ և յետոյ  
գործի սկսինք. բայց առանց ինծի խորհուրդ հար-  
ցընելու մի՛ գործեր։ Մնաք բարով։

Կուռնելիոս,— Շատ աղէկ, Շնորհակալ եմ։ Եր-  
թաք բարով։

Համբարձում,— Ես այս պանդոկապետին ըն-  
թացքին չհաւնեցայ։

Կուռնելիոս,— Աղէկ ըսիր, արդէն ես ալ չեմ  
հաւնիր այս մարդուն ընթացքին, ինչ որ է, այսու-  
հետեւ խոհեմութեամբ վարուելու է։





# ԻՆՉՊԵՍ Կ'ԸՆԿԱՍԻ ՍԻՐԱՅԱՐՈՒԹԻՒՆԸ

## ԵՒ ԻՆՉՊԵՍ ԿԸ ՎԵՐՋԱՆԱՅ

ԳԼՈՒԽ Ա.

- Օրիո՛րդ, գիշերները դուրս կ'ելնէք երբեմն:
- Գիշերները դուրս ելնելը չեմ սիրել:
- Ես ալ չեմ սիրել: Ի՞նչ կ'ընէք հապա գիշերները:
- Ի՞նչո՞ւ հարցուցիք:
- Ներեցէք, թէ որ կ'ուզէք հարցումս ետ կ'առնեմ:
- Ներելու բան չկայ: Գիշերները քիչ մը կը նստիմ կը կարդամ:
- Ճիշդի ինձի պէս: Ի՞նչ կը կարդաք:
- Վիպասանութիւն կը կարդամ, վէպերը շտա կը սիրեմ:
- Ես ալ շատ կը սիրեմ: Դուք ո՞ր վէպը աւելի շատ կը սիրէք:
- Պօղոս և Վիրգինիան շատ կը սիրեմ, այնչափ կը սիրեմ այս երկուքը՝ որչափ որ այս երկուքը կը սիրէին զիրար:
- Ա՛հ օրիորդ:
- Ի՞նչ կայ:
- Ո՞հ, օրիորդ:

- Ի՞նչ եղար:
- Ո՞ւֆ, օրիորդ:
- Յա՞ւ ունիս:
- Զգիտես թէ ես ալ որչափ կը սիրեմ. . .
- Պօղոս և Վիրգինիան:
- Զէ, (ծունկի վրայ գալով) զքեզ կը սիրեմ:
- (Բարկութեամբ) Դուն զիս ո՞վ կարծեցիր,
- կորսուէ սրկէ, մէջ մ'ալ երեսդ չտեսնամ:
- Գթութիւն, գթութիւն:
- Հապա մէկը իմանայ նէ մեր սիրահարութիւնը:
- Ո՞վ պիտի իմանայ:
- Ինձի սիրահարիդ մէկու մը չե՞ս ըսեր:
- Որո՞ւ պիտի ըսեմ: Տո՞ւր ձեռքդ համբուրեմ:
- Զըլլար:
- Կ'ըլլայ:
- Զըլլար:
- Կ'ըլլայ:
- Զըլ...
- Կ'ըլ...

ԳԼՈՒԽ Բ.

- Ա՛հ, օրիո՛րդ, երէկ գիշեր ամենեւին չքնացայ:
- Ինչո՞ւ, դո՞ւք ալ մլուկ ունիք:
- Մլուկ չէ, օրիորդ, չգիտեմ թէ՝ ո՛րչափ կը սիրեմ զքեզ. այս շաբթու նշանուինք իրարու հետ:
- Ես սիրուելու չտփ աղուոր չեմ:
- Հրեշտակի կը նմանիք:
- Ես ամենեւին աղուորութիւն չունիմ:
- Աչքերուդ մեռնիմ:
- Թէ որ մէկը՝ երկուքնուս ասանկ խօսիլը աեսնէ նէ՝ ի՞նչ կ'ըսէ. գնա՛ սրկէ, խենդ ես, ի՞նչ ես:
- Խենդ եմ, յիմար եմ, ի՞նչ որ կ'ուզես ան եմ (ծունկի վրայ), ահ, օրիորդ, չե՞ս սիրեր զիս:
- Զեմ սիրեր ըսող կա՞յ քեզի:

- Անանկ է նէ՝ կը սիրես;  
 — կը սիրեմ ըստղ կա՞յ քեզի:  
 — Աստուծոյ սիրուն համար ըլլայ, մի՛ մաշեցներ  
 դիս:  
 — Մաշեցնելու ի՞նչ կայ որ:  
 — Իսէ ինծի որ՝ կը սիրես զիս:  
 — Ես անանկ բաներ չիյաեմ:  
 — Իսել է որ մեռնիլս կ'ուզես կոր դուն իմին:  
 — Ինչո՞ւ մեռնիլդ ուզեմ պիսի:  
 — Օրիորդ, բացէ ի բաց ըսէ՛ ինծի թէ՛ զիս չե՛ս  
 սիրեր, ես ալ երթամ ինքզինքս կախեմ կամ ծովը  
 նետեմ կամ...  
 — Կեցիր մ'երթար, կը սիրեմ, կը սիրեմ. բայց  
 սա ալ գիտցիր որ եթէ ինքզինքդ չկախէիր քեզ  
 չպիտի սիրէի. սա քեզ սիրելուս յանցանք մը չըրի,  
 քեզի մահուընէ ազատելու համար քեզ սիրեցի:  
 — Երջանիկ եմ:  
 — Միհրանիկը կ'անցնի կոր:  
 — Օրիո՛րդ, անանկ է նէ՝ դուն Միհրանիկը կը  
 սիրես կոր, անոր անցնիլը ես չտեսայ, դուն ի՞նչպէս  
 կրցիր տեսնել. ինչո՞ւ անոր երեսը նայեցար. ինչո՞ւ  
 ան քուկին երեսդ նայեցաւ. Դուն խարեցիր զիս  
 սիրադրուժ, դուն Միհրանիկը կը սիրես կոր, Միհ-  
 րանիկն ալ քեզ կը սիրէ կոր. ըսէ՛ կը սիրե՞ս Միհ-  
 րանիկը:  
 — Ամենեւին, մանաւանդ թէ կ'ատեմ:  
 — Ես ալ գիտեմ անոնկ ըլլալը, բայց այնպէ՛  
 երեւցաւ ինծի որ դուն զինքն կը սիրես, սիրուելու  
 տղայ չէ՛ անիկա...  
 — Ոտքի ձայն մ'առի...  
 — Բերնի ձայն մ'առի...  
 — Տեսնուինք սա իր...  
 — իկ...  
 — Ուն...

ԳԼՈՒԽ Գ.

- Է՛ն, օրիո՛րդ, յայտնապէս ըսէ՛ որ չես սիրեր  
 զիս. ըսէ՛ որ մանչէթներս սիրադ գրաւելու չափ  
 մերմակ չեն. ըսէ՛ որ թաշկինակիս հոտը՝ քըթիդ  
 ուշադրութիւնը գրաւելու չափ անուշ չէ. ըսէ՛ որ  
 բանթալօնս զիս սիրելի ընելու չափ նեղ չէ. ըսէ՛  
 վերջապէս օրիորդ, ըսէ՛ որ չես սիրեր զիս:  
 — Սիրտս կը հասցնես, սիրելի՛ս, ո՛վ ըստ թէ  
 չեմ սիրեր զքեզ:  
 — Անտարբերութիւնդ:  
 — Ի՞նչ ընելու էի. կուզես որ անտարբեր չեն-  
 ւանամ և ինքզինքնիս մատնե՞նք: Երէկ իրիկուն  
 պատուանին առջե նստած էի, քու անցնիլդ տեսնե-  
 լուս պէս, շուտով տեղս փոխեցի, որովհետեւ քովս ու-  
 րիշ աղջիկներ ըլլալուն՝ վախցայ որ ինծի աչք ըրած  
 ժամանակդ անոնք ալ կը տեսնեն:  
 Հիմակուան աղջիկները ասանկ բաներու կ'ապա-  
 սեն որ ուրիշները բամբասեն:  
 — Շատ աղէկ, բայց երէկ իրիկուն ուշ տաեն  
 ինչո՞ւ դուրս չելար:  
 — Դուրս չելայ, որովհետեւ մօրեղբօրս որդին ե-  
 կած էր . . . :  
 — Անանկ է նէ՝ դուն մօրեղբօրդ որդին կը սի-  
 րես կոր օրիո՛րդ, այո՛, առջի օրը քովը նստած հետը  
 կը խօսէիր, կը ինդացիր կոր: Ա՛ն, օրիորդ, թշուառ  
 եմ . . . հի, հի, հի, իհի, հի, հի . . . :  
 — Տղու պէս ի՞նչ կուրաս կոր . . . :  
 — Տղու պէս կը խարես կոր իհի, իհի, հի, իհի. . . :  
 — Ոտքդ պատնեմ, լոէ, մէկը տեսնէ նէ՝ ի՞նչ կըսէ:  
 — Հի, հի, հի, հի, հի:  
 — Հա՛, հա՛, հա լալու ի՞նչ կայ որ ասանկ . . . :  
 — Ի՞նդաց ի՞նչ կայ որ անանկ . . . :

— Խօսէ որ քիչ մը բացուիս :  
— Ես որ հի, հի, հի բո բո բո լոր հի, հի, հի . . .  
սը սը . . . սը սը սը . . . սը սըրտովս իհի, իհի, իհի,  
հի, հի, հի . . . քե քե քե . . . քե քեղի կը սի սի սի  
ըեմ կոր . . . ե ե ե . . . երէկ հի՛, հի՛, հի՛ մի մի մի . . .  
մինչև ժա ժա ժամը տա տա տա . . . տասը քու քու  
գա գա . . . գա գալուդ սպա . . . սպա . . . սպա . . .  
հի, հի, հի, սպա . . .

— Կեցիր, անանկ չէ, մի խօսիր որ քիչ մը  
բացուիս :  
— Զը չը չը . . . չը չը չը . . . չը չը չըխօսիմ . . .  
շա շատ աղ աղէկ . . . :

### ԳԼՈՒԽ Դ.

— Խօսէ' օրիորդ, բայց մի՛ ստեր:  
— Համոզուելու ես որ քեզմէ զատ ուրիշ մէկը  
չեմ սիրեր, սիրելու ալ ըլլամ նէ՝ խենթ եմ որ քու  
առջեւդ սիրեմ:  
— Անանկ է նէ՝ մօրեղբօրդ որդւոյն հետ ի՞նչ կը  
խօսէիր:

— Իր սիրոյն վրայ կը խօսէինք: Ան ալ սիրու-  
հի մը ունի եղեր, այս սիրուհին ուրիշ սիրականներ  
ունի եղեր, այս սիրականներն ալ ուրիշ սիրուհիններ  
ունին եղեր, իրարու հետ կը կոռուին եղեր, վերջա-  
պէս ասոնց վրայ կը խօսէինք:

— Հաւատամ՞ որ ինձմէ զատ սիրական չունիս  
դուն ալ:

— Հաւատամ':  
— Թէ որ ինձմէ աւելի դեռահաս պատանի մը  
սիրուդ գրաւել ուզէ նէ՝ զիս պիտի թողուս:  
— Ամենեւին:

— Ինձմէ աւելի աղուոր մէկը ըլլայ նէ:  
— Բնաւ երբեք:  
— Ինձմէ աւելի հարուստ մէկը ըլլայ նէ:  
— Անանկ բաներու վրայ չխօսինք: Հիմա ես կի-  
րակի օրը կղզի պիտի երթամ, շրջագգեստ չունիմ,  
ինծի վաղը աղուոր խումած մը կը դրկե՞ս:  
— Ամենասյն սիրով:  
— Գլխարկ ալ չունիմ, գլուխս բաց չեմ կրնար  
երթալ ա', մազերս արեւէ կը սեւնան:  
— Գլխարկ մ'ալ կը դրկեմ:  
— Պօթիններս ալ գրեթէ հինցած են, և հին պօ-  
թինով պարտին ալ կարծեմ թէ ամօթ է:  
— Ոտքիդ չափը տուր առնեմ:  
— Աղէկ միտքս ինկաւ, ձեռնոց ալ չունիմ:  
— Զեռքիդ չափն ալ տուր:  
— Մինակ երթալ չըլլար ա', հարկաւ քովս մէկը  
պիտի առնեմ:  
— Անանկ է եա':  
— Այդ քովս եղողին ալ վրան գլուխը հարկաւ  
շտկուած ըլլալու է:  
— Հարկաւ:  
— Անոր համար ալ չորս հինգ սոկի տուր տէ  
պէտք եղածն առնենք:  
— Վաղը կուտամ:  
— Մինչև կամուրջը ոտքով չպիտի երթանք ա',  
կառք մը բունելու է:  
— Ատի դիւրին է:  
— Կղզի երթանք նէ հարկաւ անտեղը կազինօ մը  
պիտի մանենք, մանելէն ետքն ալ հարկաւ բան մը  
խմելու է, ասոր ծախսն ալ տայիր տէ լմնար երթար:  
— Ատի բան մը չէ:  
— Կղզի երթանք նէ հոն չպիտի մնանք ա', հար-  
կաւ իրիկուան տունը պիտի դառնանք:

— Պիտի գառնանք ա՛:  
— Լողալով չպիտի գառնանք ա՛, հարկաւ չոգե-  
նառով և վերջն ալ կառքով պիտի երթանք, գոնէ  
քիչն քիչ սոկի մ'ալ ասոր համար պէտք է:  
— Շատ աղէկ:  
— Տունը երթամ նէ՝ ատ Ֆիսրանով չեմ կրնար  
պարտիլ ա՛, տան մէջ հագնելու համար ալ պէտք է  
ամէնօրեայ Ֆիսրան մը ունենամ:  
— Ատի անհրաժեշտ պէտք է:  
— Զմունանք նաև ըսելու թէ՝ դոյդ մ'ալ բան-  
թուֆլա պէտք է:  
— Հարկաւ տանը մէջ պօթինով չես կրնար պը-  
տըտիլ ա՛:  
— Զմունանք նաև ըսելու թէ քոյրս ալ բան-  
թուֆլա չունի:  
— Զոյդ մ'ալ անոր համար կ'առնենք, ես ալ  
կուզեմ որ ամէն բան կանոնաւոր ըլլայ:  
— Զմունանք նաև ըսելու թէ՝ ես առաւօտները  
կաթով սուրճ կը խմեմ:  
— Է՞ս, քեզի մի՛ խմեր ըսող կա՞յ:  
— Սանքի ըսելիքս աս է որ, բան մը չմունանք  
քի վերջէն պատիկութիւն մը չըլլայ:  
— Անանկ է եա՛:  
— Ահա ամէնը ասոնք են, վաղը զրկէ որ մինչեւ  
կիրակի աղուոր մը պատրաստուիմ և կղզի երթամ:  
— Ես ալ հետդ պիտի գամ եա՞:  
— Հարկաւ, առանց քեզի կ'երթա՞մ, բայց նայէ  
որ քովս չնստիս, հետս չխօսիս, ինձի աչք չընես, որ-  
պէսզի չըլլայ թէ մէկը տեսնէ ու կասկածի:

## ԳԼՈՒԽԻ Ե.

— Ապրիս օրիորդ, ապրիս . . .  
— Ի՞նչ կայ:  
— Ի՞նչ պիտի ըլլայ, երէկ գոնէ անգամ մը ե-  
րեսս նայելու չէի՞ր:  
— Երեսդ նայելուս պէս քովիններս չուտով պիտի  
իմանային իրարու սիրահարած ըլլանիս:  
— Ըսել է որ օրիորդ, այս հաշուով ամենեւին  
ինձի չպիտի նայիս:  
— Չպիտի նայիմ հապա, քեզի ալ կ'աղաչեմ որ  
դո՛ւն ալ չնայիս ինձի: Ասկից զատ, հետս ալ մի՛ խօ-  
սէր, որովհետև մէկը տեսնալուն պէս օձիքնիս ձեռք  
կուտանք: Թէ որ զիս սրտանց կը սիրես՝ ուզածներս  
ա՛ռ ու ժամանակին զրկէ, ուրիշ բանի մի՛ խառնուիր:  
— Հետդ չխօսելէն ու երեսդ չնայելէն ետքը հոս-  
գալն ա՛լ պորտապ բան է: Հրամանքնիդ ինչ որ կ'ու-  
զէք նէ՝ ցուցակ մը չինեցէ՛ք, զրկեցէք մեզի, մենք  
ալ ինչ որ ուզեր էք նէ՝ կ'առնենք կը զրկենք, ա-  
նոնդ չէ՞:  
— Անանկ է եա՛, ձշմարիս սիրահարութիւնն ալ  
ասանկ կ'ըլլայ:  
— Իրարու երես չնայելով, այնպէս չէ՞:  
— Հապա, հրամանքդ ի՞նչ կարծեցիր, բանս գործա  
ձգեմ տէ, մինչեւ իրիկուն հետդ խօսիմ:  
— Ես ալ առասուընէ մինչեւ իրիկուն չուկանե՞րը  
պարտիմ ամէն օր քեզի ֆիստան, պօթին եւն. եւն.  
առնելու համար:  
— Աղջիկ մը սիրելու ելնելը գիւրին բան է,  
ի՞նչ կարծեցիր հապա:  
— Երիտասարդ մը սիրելը գիւրին բան է:  
— Առաջ դուն սիրեցիր զիս:  
— Դուն պատճառ եղար որ սիրեմ զքեզ:

— Ես պատճառու չեղայ, ես զքեզ չսիրեցի:  
 — Ես ալ զքեզ չեմ սիրեր ասկէ վերջը:  
 — Թէ որ հետա միշտ աստինկ պիտի վարուիս նէ՝  
 հիմակուընէ բաժնուելնիս աւելի աղէկ կ'ըլլայ:  
 — Ես ալ չեմ բաժնուիր չեմ ըսեր կոր ա՛, քեզի  
 պէս կոռւասէր աղջկան մը հետ նշանուիմ և կար-  
 գուիմ նէ՝ չէ՞ մի որ ամէն գիշեր կոիւ պիտի ընենք  
 և մեր ըլլալիք զաւակներուն առջև խազք ու խայ-  
 տառակ պիտի ըլլանք, և անոնց ալ գէ՛ օրինակ պի-  
 տի տանք:  
 — Ես ալ քեզի համար չեմ մեռնիր կոր ա՛:  
 — Ես ալ քեզի համար չեմ ապրիր կոր ա՛:  
 — Երիտասարդաց սով չկայ եա՛, ուզած երիտա-  
 սարդս կ'առնեմ:  
 — Ես ալ ուզած աղջիկս կ'առնեմ:  
 — Ուզած աղջիկդ կ'առնես հա՞ . . . գնա՛ ուրեմն,  
 մէյ մ'ալ իմ անունս բերանդ չպիտի առնես:  
 — Կ'երթամ, բայց ես այնչափ ծախս ըրի, ֆիս-  
 թան առի, պօթին առի, անոնք կ'ուզեմ:  
 — Անո՞ց ամէնն ալ հիմա կուտամ, ափսո՞ս որ,  
 ինձի պէս ազնիւ սիրտ ունեցող աղջկան մը արժէքը  
 չձանչցար: Ա՛ռ տուած ֆիսթանդ, ա՛ռ տուած պօթինդ,  
 առ վերջապէս բոլոր տուածներդ . . . (աչացը մէջ  
 շինծու արցուեֆ մը):  
 — Քեզի տո՞ւր ըսող կա՞յ:  
 — Զիս այսչափ նախատելէդ ետքը . . .:  
 — Առաջ դուն ըսիր:  
 — Ես բան մը չըսի:  
 — Ի՞նչ յանցանք ունիմ ես:  
 — Ես որ այնչափ սիրտ տուած էի քեզի . . .:  
 — Ես որ գիշերները չէի քնանար...  
 — Ես որ քեզի համար մեռնիլը աչքս առեր էի...  
 — Ես որ քուկին պօթիններդ ձեռքս առեր էի...

— Ասանկ մէկէն ի մէկ զիս նախատել...  
 — Ես քեզի ի՞նչ ըսի որ...  
 — Դուն որո՞ւ աղջիկը կարծեցիր զիս...:  
 — Դուն որո՞ւ աղան կարծեցիր զիս, քեզի գերի  
 չպիտի ըլլայի եա՛ մինչեւ հիմա չէի ուզած, բայց հի-  
 մայ կ'ուզեմ, այս' կ'ուզեմ բոլոր տուածներս: Ամէնն  
 ալ տուր:  
 — Ա՛ռ խաբերայ, ա՛ռ սիրագրուժ, առ սա ֆիս-  
 տանն ալ և գերեզմանիս վրայ փոէ՛ ու . . . հի հի հի  
 (կուլայ):  
 — Ի՞նչո՞ւ կուտաս կոր, քեզի տուր ըսող կա՞յ:  
 Ես տուածս չեմ առներ, և կ'ուզեմ որ դուն ալ ա-  
 ռածդ չտաս: Ո՞հ (ծունկի վրայ) ներէ ինձ օրիորդ:  
 — Ի՞նչ յանցանք գործեցիր որ ներեմ, բոլոր  
 յանցանքը իմս է:  
 — Դուն ի՞նչ ըրիր որ, առաջ ես պատճառ եղայ:  
 — Դուն ի՞նչո՞ւ պատճառ պիտի ըլլաս, իմ գետ-  
 նին տակը անցնելիք բնաւորութիւնս է որ . . .:  
 — Իմին անխոհեմ ընթացքս է որ . . .:  
 — Մոռնանք քիչ մը առաջ եղածները չեղածի  
 պէս սեպենք:  
 — Էհ, մնաք բարով օրիորդ:  
 — Երթաք բարով:  
 — Ե՞րբ գամ:  
 — Վաղը իրիկուն գալու ատենդ հետդ թօփ մը  
 խասա, երկու թօփ ալ պտսմա բեր:

### Գլուխ Զ.

— Օրիորդ, կը ցաւիմ որ ձեր ապսպրած խասան  
 ու պասման առնելու մոռցայ:  
 — Մոռցար նէ՝ ես ալ հետդ խօսելու մոռցայ.

մասք բարով:

— Օրիորդ, ամէն անդամ որ քեզի տեսնելու  
կուգամ նէ՝ միշտ հետս բա՞ն մը բերելու եմ:

— Ի՞նչ կարծեցիր հապա...:

— Բաել է որ մինակ գալու չգար հոս, կամ խսառ  
կամ պտամա կամ տանթէլա և կամ ուրիշ բան մը  
հետս առնելով այնպէս գալու եմ:

— Հարկաւ: Մնաք բարով:

— Ո՞ւր կ'երթաս կոր, կեցիր քիչ մը խօսինք:

— Ի՞նչ պիտի խօսիմ: Մնաք բարով:

— Կաղաչեմ, կեցիր քիչ մը:

— Մնաք բարով:

— Զարմանալի բա՞ն, սիրուհի մը ունենալը թե-  
ւին տակը միշտ բան մը ունենալ ըսել է եղեր:

— Կամաց կամաց այն բանը արտարած մը կ'ըլլայ  
և անոր ալ սիրուհի կ'ըսեն: Մնաք բարով:

— Վաղը բերեմ նէ՝ չըլլար

— Չըլլար; Մնաք բարով:

— Բաէ՛ օրիորդ, հետս նշանուելու միտք չունիս  
նէ՝ պարապ տեղը մի՛ հոգնեցներ զիս:

— Նեղը գալուդ պէս աս խօսքը կ'ընես. չնշան-  
ւիմ նէ՝ ի՞նչ կ'ըլլայ եղեր, սանքի Պոլսոյ մէջ քեզմէ  
ուրիշ երիտասարդ չկայ: Սըւոր նայէ՛ մէյ մը, հետս  
չպիտի նշանուիս նէ եղեր, պարապ տեղը զիս մի  
հոգնեցնէր է եղեր... էյ, չոգնեցնէմ նէ՝ ի՞նչ կ'ըլլայ  
եղեր, աշխա՞րհ կը կարծանի... սըւոր նայէ մէյ մը,  
հետս չպիտի նշանուիս նէ եղեր զիս մի հոգնեցնէր  
է եղեր . . . :

— Ի՞նչ կը բարկանաս կոր օրիորդ, ամէն մարդ  
իր վրայ համարում ունի, կ'ուզես որ ապուշի պէս  
կըթուի՞մ... ամէն գալուս մէյ մէկ բան կ'ապսպրես,  
խսանէ, պասմանէ, ազթինէ, շաբիսնէ, ասոր վերջը:

— Զիս չպիտի առնես նէ եղեր, պարապ տեղը

զիս մի հոգնեցներ է եղեր, սանքի քեզի համար կը-  
մարիմ կոր...:

— Ի՞նչ ուզեցիք օրիորդ, շուկան առնենք հո՞ս-  
քերենք:

— Ի՞նչ կ'ըլլայ եղեր, զիս շուկան տանելուդ,  
շուկան հոս բեր... բայց սա խօսքը ի՞նչ պիտի ըլլայ,  
զիս չպիտի առնես նէ եղեր...:

— Աղէկ որ քառասուն տարին անդամ մը խօսք-  
մը ըրինք, ծա՞նը եկաւ:

— Հարկաւ ծանը պիտի գայ, սանքի հրեշտակի-  
պէս աղուոր երիտասարդ մ'ես տէ...:

— Զաւանեցա՞ր:

— Զաւանիմ նէ՝ ի՞նչ կ'ըլլայ եղեր: Հետս չպիտի  
նշանուիս նէ եղեր զիս մի՛ հոգնեցներ է եղեր

— Բաել է որ զիս չես ուզեր:

— Չուզեմ նէ՝ ի՞նչ կ'ըլլայ եղեր:

— Մեղք ինծի որ քեզի պէս աղջիկի մը սէր  
տուեր եմ:

— Տուածդ ա՛ռ:

— Դուն առածդ տուր:

— Ես քեզի բան մը ըսե՞մ, դուն մէյ մ'ալ հոս  
մի գար, ես քեզի չսիրեցի: Հետս չպիտի նշանուիս  
նէ՝ եղեր զիս մի՛ հոգնեցներ է եղեր:

— Կարծես թէ ես քեզի սիրեցի՞, անիծեալ ըլլայ  
այն օրը որ քեզ տեսայ:

— Օրէսեալ ըլլան այն օրերը՝ ուր զքեզ չպիտի  
տեսնամ:

— Օրիորդ, մինչեւ հիմայ ի՞նչ որ տուեր եմ նէ  
քեզի ամէնն ալ կ'ուզեմ:

— Ես ալ ամէնն ալ կուտամ:

— Մէյ մ'ալ քու անունդ բերանս չպիտի առ-  
նեմ:

— Շնորհակալ կ'ըլլամ:

— Երեսդ. երազիս մէջ անգամ տեսնեմ նէ՝ երեսս  
 անդին պիտի դարձունեմ...:  
 — Որով մեծ բարիք մը պիտի ընէք իսծի:  
 — Չեր տանը առջեւէն չպիտի անցնիմ.  
 — Որով մեր տունը պիտի պատուէք:  
 — Քեզի հետ սիրահարութիւն ըրած ըլլալս բոլոր  
 բարեկամացս պիտի ըսեմ:  
 — (Ի ծունը) Գթութիւն, գթութիւն...  
 — Ոտք ելիք օրիորդ (մեկսւի) աղջիկները աս  
 բանէն կը վախնան եղեր մէյէր:  
 — Շնորհակալ եմ... չեմ կարծեր որ այնչափ  
 անգութ ըլլաս...:  
 — Կատակ ըրի ես օրիորդ:  
 — Գիտեմ որ կատակ ըրիք... բայց...:  
 — Մէյ մ'ալ չեմ ըներ: Վաղը գամ, քիչ մը  
 պտտելու երթանք:  
 — Շատ աղէկ: Պասման չմոռնաս:

### ԴԼՈՒԽԻ Ե.

— Եկայ օրիորդ, օ'ն, պտտելու երթանք:  
 — Երթանք, բայց ես չեմ կրնար քալել, կառք  
 մը բոնէ':  
 — Շատ աղէկ (կ'երբայ կառք մը կը բերէ) հը-  
 րամմեցէք օրիորդ:  
 — Աս ինչ տեսակ ձի է, հէմ ասոր գոյնը ճերմակ  
 է, ես կարմիր կ'ուզեմ:  
 — Կարմիր չկար օրիորդ, անոր համար աս բերի:  
 — Ես կարմիր կ'ուզեմ ձին:  
 — Ի՞նչ ընենք հիմա օրիորդ, հաւկիթ չէ որ  
 շուտ մը ներկենք, հրամմեցէք, մտէք:  
 — Կեանքիս մէջ բնաւ ճերմակ ձիու կառքը


նստած չէի, աս ալ եկաւ գլխունուս...  
 — Ո՞ւր կ'ուզէք երթալ օրիորդ:  
 — Ո՞ր կողմի փողոցները աղուոր են նէ՝ ան  
 կողմը երթալ կ'ուզեմ:  
 — Բերա ելնե՞նք:  
 — Ելնե՞նք:  
 — Կառա՛զար, Բերա տար մեզի: Բաէ՛ օրիորդ,  
 բայց սրտանց խօսէ՛, իրաւ կը սիրե՞ս զիս:  
 — Ուֆ, նորէն մի սկսիր, հոգիդ սիրես նէ:  
 — Իմ հոգիս դուն ես:  
 — Ասանկ խօսքեր չեմ կրնար մտիկ ընել. ան-  
 գամ մը կը սիրեմ ըսելէն ետքը՝ ամէն օր չեն հար-  
 ցըներ թէ՛ կը սիրե՞ս զիս:  
 — Ուրախ եմ որ կը սիրես: Սիկառ մը կ'ուզե՞ս  
 օրիորդ:  
 — Այո՛:  
 — Ահաւասիկ թուղթ և ծխախոս:  
 — Շինեցէ՛ք և այնպէս տուէ՛ք:  
 — Առէ՛ք:  
 — Փակցուցէ՛ք:  
 — Հրամմեցէ՛ք:  
 — Վառեցէ՛ք:  
 — Առէ՛ք:  
 — Բերա երթանք նէ՝ ո՞ւր պիտի նստինք:  
 — Ուր որ հաճի ձեր գեղեցկութիւնը:  
 — Թագսիմի պարտէզը կ'ուզեմ ես:  
 — Հոն կ'երթանք:  
 — Կառքով կրնա՞նք ներս մտնալ:  
 — Այո՛:  
 — Կառքով կրնա՞նք աթոռի վրայ նստիլ:  
 — Աթոռները պղտիկ են:  
 — Կանչէ, կանչէ՛ սա մարդը ու օխայ մը շա-  
 գանակ առ:

— (Կը կանչէ ու կ'առնի) Հրամմեցէ՛ք օրիորդք:  
 — Ես չեմ կրնար ուտել, կառավարին տո՞ւր:  
 — Շատ աղէկ:  
 — Խաղող կը ծախեն կոր, քիչ մը կ'առնե՞ս:  
 — Ո՞րչափ առնենք օրիորդ:  
 — Չորս հինգ օխա բաւական է:  
 — Շատ աղէկ (կ'առնի) հրամմեցէ՛ք:  
 — Լուտցված չէ, սա ջուր ծախողը կանչէ, քիչ  
 մը ջուր առ ու լուտ:  
 — Այո՛, այո՛. (կը լուալ) Կերէ՛ք:  
 — Պատառաքաղ չգտնութի՞ր արդեօք կառավա-  
 րին քովը, հիմա ձեռքովս ուտեմ նէ՝ ձեռնոցներս  
 կ'աղտոտին:  
 — Զեմ կարծեր որ . . .  
 — Սըկէ երկու օխա թուղ չառնե՞ս:  
 — Առնենք օրիորդ . . . բայց . . . Բերա եկանք,  
 պարտէզին առջին ենք . . .:  
 — Անանկ է նէ իջնանք:  
 — Շատ աղէկ, (առ կառավարն) հոս կեցիր դուն:  
 — Ո՞ւր նստինք օրիորդ:  
 — Սա ծառին առաջ նստինք, անցնողները զննենք:  
 — Սա երիտասարդը ո՞վ է:  
 — Քովէն գացող աղջիկին սիրականը:  
 — Ասդիի աղջիկը:  
 — Անդիի երիտասարդին սիրուհին:  
 — (Մէկուսի) Միհրանիկս հոս է, քիչ մը քովը  
 երթամ:  
 — Ո՞ր կ'երթաք կոր օրիորդ:  
 — Մօրեղբօրս աղան հոս է, քիչ մը քովը երթամ  
 ու գամ:  
 — Շատ աղէկ, գնա, (առանձին) զիս մինակ թո-  
 ղուլ և մօրեղբօրը տղուն քով երթալը չվայլեր, ինչ  
 է նէ՝ համբերելու է: Ահա գնաց . . . մօրեղբօրը տղան

ոտք ելաւ . . . իրարու ձեռք կը սեղմեն կոր . . .  
 մօրեղբօրը տղան քիչ մը ուժով կը սեղմէ կոր կար-  
 ծեմ . . . նստեցան . . . մօրեղբօրը տղան հօրաքրոջը  
 աղջկան ձեռքը կը համրուրէ կոր . . . աս ինչ է . . .  
 ասոնկ մօրեղբօր տղայութիւն կ'ըլլայ : . . . քահ քահ  
 կը ինդան կոր . . . օղի կը խմեն կոր . . . գաւաթ-  
 ները իրարու կը զարնեն կոր . . . թե թեւի մտան,  
 կը պաշտին կոր . . . ենեմ սըւոնց ետեւէն երթամ,  
 և օրիորդին ըսեմ որ քովս գայ . . .

— Ներեցէ՛ք, մինակ մնացիք, ի՞նչ ընեմ, շա-  
 տոնց է որ մօրեղբօրս տղան տեսած չունէի . . .  
 — Հրաման տուէ՛ք ինծի, օրիորդ երթամ:  
 — Հրամանը ձերն է, կրնաք երթալ:  
 — Այսափ յայտնի կերպով կը վանտես զիս . . .  
 — Վանտեմ նէ ի՞նչ կ'ըլլայ եղեր:  
 — Մնաք բարով օրիորդ, մօրեղբօրդ տղուն խե-  
 րը տես, օրիորդ, այդ երիտասարդը քու սիրականդ է:  
 — Այո՛ սիրականս է, ի՞նչ ըսել կ'ուզես:  
 — Ըսել կ'ուզեմ որ ես քու սիրականդ չեմ:  
 — Հարկաւ չես:  
 — Արդէն քու աչքերէդ յայտնի էր ինչ աղջիկ  
 ըլլալդ:  
 — Եա, քեզի պէս ապուշը սիրելո՞ւ էի:  
 — Դուն ալ ինքզինքդ տղուորի տե՞ղ ես դրեր:  
 — Կորի՛ սըկէ:  
 — Դուն ալ կորի՛, (Երբալով), աղէկ որ խալըսե-  
 ցայ սըկէ, շատոնց կ'ուզէի թողուլ, բայց յարմար ա-  
 ռիթ մը չէի գտած: Ազուորութիւն մը չունի որ, բե-  
 րանը, քիթը մեծ, մատուցները կէս կանգուն երկայ-  
 նութիւն ունին, մազերը կարճ, թեւերը երկար, հա-  
 սակը ոչ կարճ ոչ ալ երկար, վերջապէս հրէշ մը, աղ-  
 ւոր ըսելու տեղ մը չունի, ես անոր քով հրեշտակ մը  
 եմ: Շատ պիտի փնտոէ անիկա ինծի, և չպիտի կրնայ

գանալ, ինծի համար պիտի լայ, պիտի ողբայ, բայց  
ի զուր, ոտքերուս պիտի փարի, բայց օդուտ մը չպի-  
տի ընէ, ամէն առատու անոր տանը առջեւէն պիտի  
անցնիմ որ զիս տեսնէ ու հալի:



## ՔԱՂՈՒԱԾՔ

ՊԱՐՈՆԵԱՆԻ ՍՐԱՄՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

= Տասնեւութը տարեկան աղջիկներն աւելի կը  
փափաքին ամուսին մը ունենալ քան թէ [սիրահար  
մը, բայց հիմա այնպէս կը հագուին՝ որ իրենց չափա-  
զանց զարդարանքը սիրահարներ կը հրաւիրէ և ա-  
մուսինները կը հեռացնէ:

= Սէրը լուսնոյ կը նմանի, երբ որ չաճիր, կը  
նուազի:

= Անտարբեր ապրող մարդը դեռ իր սիրելիք  
կինը տեսած չէ:

= Նախանձը միշտ սիրոյ հետ կ'ակսի, բայց ա-  
նոր հետ չի վերջանար:

= Սիրուհիէ մը քաշուիլը շատ անդամ զանի  
ձեռք ձգելէն աւելի դժուար է:

= Սէրը հիւանդութիւն մըն է, որուն բժիշկը  
նոյնիսկ ինքն է:

= Ծաղկի հիւանդութիւնը կանանց Վաթերլօյի-  
պատերազմն է, հետեւեալ օրը զիրենք իրօք սիրողնե-  
րը միայն կը ճանչնան:

= Պղտիկ աղջիկները պէպէքներով կը խաբուին,  
մեծերն ալ երդումով:

= Հարսնիքէ առաջ եղած սէրն՝ անվերջ գրքի  
մը սկիզբը դրուած համառօտ յառաջաբանի մը կը  
նմանի:

= Կնոջ մը արժանիքը գեղեցկութեան ճառա-  
գայթով մը լուսաւորուելու պէտք ունի:

= Զար կնոջ մը ամենէն աւելի վնասակար ան-  
դամը լեզուն է:

= Ամուսինը սպեզանի մըն է, որ աղջկանց բո-  
լոր ցաւերը կը բժշկէ:

= Սէրը շատ անգամ ամենէն ճարպիկ մարդը  
խենթ կ'ընէ և ամենէն խենդն ալ ճարպիկ կ'ընէ:

= Որչափ ալ կանանց և ամուսնութեան վրայ  
ուզածնիս ըսենք՝ դարձեալ երկուքէն ալ չենք կրնար  
զատուիլ:

= Ամենէն ճարտասանները սիրոյ առջեւ համր  
կ'ըլլան:

= Լութիւնը կնոջ տրուած է իր միտքը լաւ  
հասկցնելու համար:

= Զկայ կին մը՝ որուն յարգը գեղեցկութենէն  
աւելի ահւէ:

= Սիրածէն հեռանալն՝ իր անձին կէսը միայն  
ունենալ ըսել է:

= Կինը աւելի սիրուելու համար ստեղծուած է  
քան թէ սիրելու, ծաղիկներու պէս՝ որ իրենց հոտը  
իրենք չեն առնէր և ուրիշներու կուտան, կիներն ու  
սիրային ծաղիկներ են:

= Սիրուհիէ մը վրէժ առնելը, գեռ զանի սրեւ-  
լու նշանն է:

= Պղտիկ կին մը շատ անգամ մեծ բեռ մըն է:

= Առանց երջանկութեան հարուստ ըլլալը, ա-  
ռանց սիրոյ կին ունենալու կը նմանի:

= Վայելչութիւն չունեցող գեղեցկութիւնը կեր  
չունեցող կարթի կը նմանի:

= Սիրոյ մէջ երջանիկ ըլլալու շատ փափաք ու-  
նենալը՝ շատ անգամ երջանիկ ըլլալու արգելք կ'ըլլայ:

= Պարկեշտ կինը գաղանի գանձ մըն է, զոր  
գտնողը խիստ լաւ կ'ընէ եթէ անոր վրայ չը սրոր-  
ծենայ:


= Երիկ մարդու մը մէկ տարուան մէջ խորհա-  
ծը կինը մէկ օրէն տակնուվրայ կ'ընէ:

= Սիրոյ կերքը շոգիի պէս է, որչափ սեղմուի  
այնչափ աւելի կը զօրանայ:

= Սիրոյ զօրութիւնը զգացուած ատենը միայն  
կը ճանչցուի:



ԳՐԱԴՐԱՆ



ՀՀ Ազգային գրադարան



NL0361112

— 50144